Արձանագրություն թիվ 1

2022 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները:

Օրակարգում՝

1.2022-2023ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:
2.Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը:
3.Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- .2022-23 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Նարե Հովհաննիսյանը, ով ներկայացրեց 2022-2023 ուստարում 5-րդ <<Ա>> դասարանում կատարվելիք աշխատանքների մասին:

Որոշեցին.

1.Նախագահի թեկնածու առաջադրել և հաստատել Նազիկ Գևորգյանին:
2.Մարինե Բաբայան / անդամ/
3.Անահիտ Հովակիմյան /անդամ/
4.Անահիտ Թադևոսյան /անդամ/
5.Անի Պապիկյան /անդամ/

2.Լսեցին.- Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը: Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ՝ Նարե Հովհաննիսյանը նշեց,որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:.Դասղեկը հորդորեց ծնողներին՝սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ,ինչը կխթանի ճիշտ ու արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը: Ուսուցիչներին և

դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ,նշված ժամկետում սկսել և ավարտել դասագրքերի վարձավճարները: Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարները ,հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:.Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը կատարել ժամանակին՝ համապատասխան ցուցակով:

3.Լսեցին.-Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ՝Նարե Հովհաննիսյանը նշեց ,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին հետևել իրենց երեխաներին հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.- Առավելագույնս ուշադիր լինել աշակերտների հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Նազիկ Գևորգյան

Քարտուղար՝ / Մարինե Բաբայան